ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն
«Երևանի
հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների
հ. 17 հատուկ դպրոց»
Պետական
ոչ առևտրային կազմակերպություն

Ministry of education, science, culture and sport
Republic of Armenia
Yerevan
Special School N 17 for the children with breached-movement extremities
State non-trade Organization

ՀՀ ք.Երևան, Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական փ.-41 ☎ 646601, 646789
RA Yerevan, II Nork Massive, Moldovakan 41 ☎ 646601, 646789
17hatukdproc@gmail.com

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 7-Լ

08.01.2024թ

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտնում ենք Ձեզ որ <<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռք բերման նպատակով գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպված 17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/01 ծածկագրով մրցույթին 24.11.2023թ-ին հայտ էր ներկայացրել նաև << Հայկազունք >>ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2023թ-ի թիվ 3 որոշմամբ 2, 4, 5, 7, 8, 9, 13, 18, 27, 30, 32, 33, 34, 35, 41, 55, 57, 59, 61, 63, 65 չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր հայտարարվել << Հայկազունք >> ՍՊԸ-ն:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով՝ 14.12.2023 թվականին << Հայկազունք >> ՍՊԸ-ին /այսուհետ՝ Մասնակից/ ներկայացվել էր 17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/01 N 3 ծածկագրով պայմանագիր կնքելու, պայամանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն հրավերով սահմանված ժամկետում ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 21.12.2023 թվականը ներառյալ/ Մասնակցի կողմից չի ներկայացվել հաստատված պայմանագիրը և ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված <<Հայկազունք>> ՍՊԸ-ն <<Գնումների մասին >> օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. << Հայկազունք >> ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00031526) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել << Հայկազունք >> ՍՊԸ-ին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ **Վ. ԵՍԱՅԱՆ**